



**ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԻՍԱՍՏԱՍԵՐ, Լուծմունք «Սահմանաց գրոց», աշխատասիրությամբ Ա. Գ. Մադոյանի, Հ. Ղ. Միրզոյանի, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004, 124 էջ:**

**Հրատարակվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ:**

Հանրահայտ է, որ աղբյուրագիտությունը ամեն մի պատմական գիտության զարգացման անհրաժեշտ նախապայմաններից է, իսկ սկզբնաղբյուրների հրատարակումը՝ այդ գիտության զարգացման նախադրյալներից մեկը: Դա վերաբերում է նաև հայ փիլիսոփայապատմական գիտությանը, որի սկզբնաղբյուրների հրատարակումը մի շարք պատճառներով բավականին աշխատատար է ու բարդ: Առավել ևս եթե խոսքը վերաբերում է որևէ բնագրի քրոնական հրատարակությանը: Անցյալ դարի 50-ական թվականներից, երբ կայանում էր հայ փիլիսոփայապատմական գիտությունը, հրնթացս հրատարակվեցին նշանավոր հայ մտածողների որոշ աշխատություններ, ընդհամեն, դրանց մի մասը նաև՝ աշխարհաբարով և ռուսերենով:

Ցավոք, վերջին տասնամյակներում օրյեկտիվ և սուրյեկտիվ պատճառներով այս ասպարեզում ուշադրության արժանի քիչ գործեր են կատարվել: Եվ ահա ճանաչված հայագետներ Ա. Գ. Մադոյանի և Հ. Ղ. Միրզոյանի աշխատասիրությամբ ընթերցողի դատին է հանձնվել հայ փիլիսոփայական մտքի ուշագրավ հուշարձաններից մեկը՝ Հովհաննես Սարկավագ Իմաստասերի «Լուծմունք «Սահմանաց գրոց» փիլիսոփայական աշխատության քննական բնագիրը, որը արժեքավոր է մի շարք առումներով:

Նախ՝ այն պատճառով, որ հրատարակիչների տևական պրպտումների արդյունքում կազմված բնագիրը ինքնին ամ-

բողջական աշխատություն է: Բանն այն է, որ շատ ձեռագրերում «Լուծմունքը» և «Պատճառք Սահմանաց գրոց»-ը ներկայացվել են որպես իրարից անջատ աշխատություններ: Մինչդեռ 1980 թ. Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակի տոնակատարության առթիվ աշխատասիրողները, հրատարակության պատրաստելով միայն «Լուծմունքը», առաջաբանում, ելնելով ինչ-ինչ տվյալներից, հնարավոր էին համարել, որ «Պատճառքը» և «Լուծմունքը» մեկ միասնական աշխատություն են: Այնուհետև Հ. Ղ. Միրզոյանը Երևանի և Երուսաղեմի մեկուկես տասնյակ ձեռագրերի բաղդատական ուսումնասիրության հիման վրա հանգեց այն եզրակացության, որ դրանք «ոչ թե առանձին աշխատություններ են, այլ միևնույն ստեղծագործության թյուրիմացաբար իրարից զատված երկու հատվածներ»: Նրա բերած հիմնավորումները և փաստարկները միանգամայն համոզիչ են:

Երկրորդ կարևոր արժանիքն այն է, որ հրատարակված բնագիրը «անանուհի» վերածվել է «անուն ունեցողի» և ներկայացվել է որպես միջնադարի նշանավոր մատենագիր, բանաստեղծ ու փիլիսոփա *Հովհաննես Սարկավագ Իմաստասերի* (մահ. 1129) գրչին պատկանող աշխատություն: Բանն այն է, որ ոչ մի ձեռագրում չի նշվում այդ երկի թեղիմակի անունը, ուստի մասնագետների շրջանում այն հայտնի էր իբրև անանուն երկ, որը գրված է XII-XIII դարերում (մեզ հայտնի ամենահին ձեռագիրը գրված է 1283 թ.): Օրինակ, հայ փիլիսոփա-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Մադոյան, Հր. Միրզոյան, Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» անանուն մեկնությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, թիվ 1, էջ 122:

<sup>2</sup> Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Արդյո՞ք ամբողջական աշխատություն է «Պատճառք Սահմանաց գրոց»-ը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2000, թիվ 1, էջ 75:

յության պատմաբան Գ. Գրիգորյանը առանց յուրջ հիմնավորումների այդ երկը վերագրել է XIII դարի Աշտուրի փիլիսոփա Վահրամ Բարունուն, որը, ի դեպ, ի շարս այլ փիլիսոփայական գործերի, գրել է նաև Դավիթ Անհաղթի «Պորփյուրի «Ներածություն» մեկնություն» աշխատության մեկնությունը: Բնականաբար, Լուծմունքի հրատարակիչները չէին կարող շրջանցել լուսաբանման կարոտ այս հարցը, թեև թվում է, թե դա անմիջապես չէր առնչվում բնագրի հրատարակման առանց այն էլ բազմաբարդ աշխատանքի հետ: Այնուհանդերձ, Ա. Գ. Մարդյանը և Հ. Ղ. Միրզոյանը դեռևս 1980-ական թվականներին առաջադրեցին գիտական մի վարկած, ըստ որի աշխատության հեղինակ էր դիտվում Հովհաննես Սարկավազ Իմաստասերը: Մասնավորապես պրոֆ. Հ. Ղ. Միրզոյանը «Հովհաննես Սարկավազ Իմաստասերը «Լուծմունք Սահմանաց գրոց» երկի հեղինակ» հոդվածում բերում է մի շարք փաստարկներ, որոնք ցուցանում են «Լուծմունքի» և Սարկավազի մյուս երկերի միջև գոյություն ունեցող նմանություններն ու ընդհանրությունները: Դրանց հիման վրա նա համոզում է այն եզրակացության, որ «Լուծմունքը» Սարկավազի գրչին արժանի աշխատություն է և ի վիճակի է բացատրելու, արդարացնելու նրա Իմաստասեր կոչումը»: Ա. Գ. Մարդյանի և Հ. Ղ. Միրզոյանի բերած հիմնական փաստարկներից առանձնացնենք հետևյալները.

ա. Սարկավազի «Յաղագս անկիմատր թուոց» աշխատության բացատրական մասի մի ծավալուն հատվածի առկայությունը «Լուծմունքում»: Բնագրի հրատարակիչները կարծում են, որ «Լուծմունքի» հեղինակը անպայման մաթեմատիկոս է, քաջահմուտ է այդ գիտության գաղտնիքների: Ավելին, նրանք կարծում են, որ «Լուծմունքը» Սարկավազը գրել է «Յաղագս անկիմատր թուոց» աշխատությունից հետո:

բ. «Լուծմունքի» և Սարկավազի «Բան իմաստութեան» քերթվածի միջև գոյություն ունի գաղափարական ընդհանրություն: Առաջին հերթին խոսքը վերաբերում է «Լուծմունքի» «օտարացաք ի բնականէն» և «Բան իմաստութեան»-ի «կացի ի բնականին» արտահայտությունների ընդհանրությանը:

գ. «Լուծմունքի» և Սարկավազի մյուս

աշխատությունների միջև գոյություն ունեցող լեզվական, բովանդակային և տրամաբանական նմանությունները և ընդհանրությունները:

Բերված փաստարկները ընդհանուր առմամբ համոզիչ են, և կարծես թե այլևս մեզ ոչինչ չի խանգարում վերջիվերջո ընդունելու, որ «Լուծմունքի» հեղինակը Հովհաննես Սարկավազ Իմաստասերն է:

Երրորդ արժանիքն այն է, որ այդ աշխատությունը զարգացած ավատատիրական շրջանի հայ փիլիսոփայական մտքի կարևորագույն հուշարձաններից է և լրացնում է մեր պատկերացումները ինչպես այդ շրջանի, այնպես էլ առհասարակ միջնադարյան հայ փիլիսոփայության վերաբերյալ: Բանն այն է, որ, լինելով անանուն, այն ըստ էության չի իմաստավորվել ու գնահատվել մասնագետների կողմից: Մինչդեռ այդ երկի ուսումնասիրությունը շատ կարևոր է հասկանալու ոչ միայն միջնադարյան հայ փիլիսոփայության զարգացման միտումները, դրա ներքին տրամաբանությունը, այլև մի շարք տեսական-փիլիսոփայական հարցերի լուծման ուղղվածությունը: Օրինակ, անչափ հետաքրքիր է, թե տվյալ աշխատության մեջ ինչպես է լուծվում փիլիսոփայության և աստվածաբանության, բանականության և հավատի, կրոնականի և աշխարհիկի փոխհարաբերության հիմնահարցը, որը միջնադարյան փիլիսոփայության կարևորագույն հիմնահարցերից մեկն է: Հայտնի է, որ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատությունը փիլիսոփայության յուրօրինակ ջատագովությունն է. դրանում փիլիսոփայությունը դիտվում է որպես մարդկային զբաղմունքներից ամենապատվաբերը, աստվածային մի գիտություն, որով մարդը կարող է նմանվել Աստծուն: Բնագրի հրատարակիչները *Առաջաբանում* նշում են, որ «Լուծմունքը» աչքի է ընկնում իր աշխարհիկ բովանդակությամբ: Իսկապես, դժվար է չհամաձայնել այս բնութագրման հետ: Սակայն դրա հետ մեկտեղ, ըստ իս, հարկավոր է զգուշանալ հետոն գնացող հետևություններն անելուց: Այսպես, ներկայացնելով մարդու ըմբռնման բնագրի՝ հեղինակի տեսակետը («Արդարև մարդ է, որ զարդարել զերկիր ի ձեռն բազմագործ արուեստի իւրոյ քաղաքաց և գիղից, ազարակաց և տանց և զարմանա-

զան շինուածոց, և բարձրաբերձ աշտարակաց, արօրելով զնա տածել բուրաստանս և այգիս»), որը ճոխացնում ու հարստացնում է Դավիթ Անհաղթի արտահայտած միտքը, բնագրի հրատարակիչները գրում են հետևյալը. «Մարդու այսօրինակ ըմբռնումը՝ նրա ստեղծագործական դերի ու աշխատանքի փառաբանումը, հակադիր լինելով կրոնականին, համահունչ էր Վերածնության դարաշրջանի հումանիստական պատկերացումներին ու գաղափարներին»: Այսպիսի գնահատականից բխում է, որ հեղինակը իրար է հակադրում կրոնականն ու աշխարհիկը կամ, հակառակ կրոնականին, զարգացնում է բովանդակությամբ աշխարհիկ գաղափար: Մինչդեռ այսպիսի մոտեցումը ոչ միայն հակադիր չէ կրոնականին (իմա՝ մարդու քրիստոնեական ըմբռնմանը), այլև միանգամայն համահունչ է դեռ վաղ միջնադարից հայ մտածողության մեջ արմատավորված տեսակետին: Այլ կերպ ասած՝ «Լուծմունքի» հեղինակը հավատարիմ է մնում նախորդ դարերի հայ փիլիսոփայության մեջ ձևավորված փիլիսոփայական և աստվածաբանական, կրոնական և աշխարհիկ գաղափարների համադրման տեսակետին: Այդ մասին է վկայում հենց «Պատճառ Սանհմանաց գրոցն», որտեղ հակիրճ ներկայացվում է արարչագործության ընթացքը, մարդկային պատմության մեջ տեղի ունեցած առանցքային իրադարձությունները, հեթանոսական և քրիստոնեական իմաստության միջև գոյություն ունեցող կապը, իմաստություն սովորելու անհրաժեշտությունը և իմաստության ու կրթության հանդեպ հայերի ակնածալից վերաբերմունքը: Հեղինակի կարծիքով հայ ուսումնասերները «զամենայն անտեսեցին, որ ինչ աշխարհիս, զբոլոր սորա՝ ցանկութիւն և զամենայն հեշտութիւն՝ զազգ և զգաւտ, զհնչս և զստացուածս, զեղբարս և զհարս և միանգամայն զամենայն իրս երևելիս և զբազում թողեալ ի թիկունս աշխարհի՝ ի մայրն ընթացան վարժից, ի տունն իմաստութեան, ի ճեմարան կրթարանին, ուր

զբազում ցուցեալ հանդէս երկոց տածանմանց՝ մինչ ի սակաւն յուրվ յինքեան յամբարեալ ժամանակ գիտութեան, փոյթ սովերք և քա՛ջ եղեն փիլիսոփայք անուանիք, մինչ ոչ միայն տեսողացն և կամ լսողաց, այլ և հանուրց լինէր զարմացումն...»: Դրանց թվում էր նաև «գերահռչակեալ» Դավիթ փիլիսոփան, որը հակադրվում էր ոչ միայն այն մարդկանց, ովքեր «ոչ միայն ոչ ընդունեցան, այլ և հենց-հենց ընդդէմ յառնելով՝ զի՞նչ մեզ բաղբաղիք, ասեի՞ն, սեթևեթանքս ձեր անպիտան բնասին մեզ թուին, սուտ և ունայն ձերդ իմաստութիւն...», այլև այն մտածողներին, ովքեր «եղծանել կամէի՞ն զիմաստասիրութիւնն և առ ոչինչ համարէի՞ն, անօգուտ և անպիտան ասեի՞ն...»: Մեկնիչի կարծիքով, Դավիթ Անհաղթի «Սահմանքի» գլխավոր նպատակն այն էր, որ «ցուցանէ սա գեղեցիկ զոլ զսա և ցանկալի քան զամենայն երևելի պատուականութիւն և զայս հնարս իմացեալ իմաստոյն, ազգասիրութեամբ եկեալ յայստիկ. իբրու զի յորժամ տեսցեն զսահման և զիրողութիւն իմաստասիրութեան, ի սեր շարժին նմին և բաղձան ուսանել...»:

Բացի վերոնշյալից՝ բնագրի հրատարակությունը կարևոր է նաև ինչպես Դավիթ Անհաղթի տեսական ժառանգությանն աղերսվող բնագրային բնույթի, այնպես էլ նրա ուսմունքի մեկնության հետ կապված բազմաթիվ հարցերի լուսաբանման տեսանկյունից: Դավիթ Անհաղթը միջնադարյան հայ իրականության մեջ ընդունվել է որպես *հայոց փիլիսոփա*, նրա աշխատությունները օգտագործվել են որպես դասագրքեր, ուստի անչափ հետաքրքիր է, թե այս կամ այն դարաշրջանում ինչպես են նրա մտքերը ընկալվել ու մեկնաբանվել:

Վերջում կցանկանայի մշել, որ քննական բնագրի հրատարակումը կատարված է բարեխղճորեն, գիտական բարձր մակարդակով և մեծ պատասխանատվությամբ:

**Ս. Ա. ԶԱԿԱՐԻԱՆ**